

**Հայաստանի բանկային համակարգը առանձնանում է կապիտալիզացիայի
և իրացվելիության բարձր մակարդակով**

ՀՀ ԿԲ նախագահ Արթուր Չավադյանի բացառիկ հարցազրույցն ԱՌԿԱ
լրատվական գործակալությանը

Հարց. Ի՞նչ ազդեցություն է ունեցել կամ կարող է ունենալ միջազգային ֆինանսական ճգնաժամը ՀՀ բանկային համակարգի վրա: Որքա՞ն է օտարերկրյա բանկերից ներգրավված միջոցների մասնաբաժինը ՀՀ առևտրային բանկերի ներգրավված միջոցների մեջ:

ՀՀ բանկային համակարգը առանձնանում է կապիտալիզացիայի և իրացվելիության բարձր մակարդակով, որի արդյունքում վերջիններս դառնում են կայուն և ունակ կլանելու մի շարք ռիսկեր:

Մյուս կողմից, ՀՀ բանկային համակարգին բնութագրական է շատ փոքր ներգրավվածությունը միջազգային ֆինանսական շուկաներին: Չնայած ՀՀ բանկային համակարգում օտարերկրյա կապիտալի զգալի մասնաբաժին՝ ՀՀ առևտրային բանկերի կողմից օտարերկրյա բանկերից ներգրավված միջոցները բանկերի կողմից ներգրավված միջոցների կազմում փոքր մասնաբաժին են կազմում (մոտ 10%) և հիմնականում երկարաժամկետ են: Օտարերկրյա բանկերից ներգրավված կարճաժամկետ միջոցների մասնաբաժինը բանկային համակարգի ընդհանուր ներգրավված միջոցների կազմում 1%-ից փոքր է:

Վերոնշյալը վկայում է այն մասին, որ միջազգային ֆինանսական շուկաների իրացվելիության ճգնաժամը քիչ հավանական է, որ ազդեցություն կունենա ՀՀ բանկային համակարգի վրա:

Հարց. Եղե՞լ են արդյոք օտարերկրյա ներդրողների կողմից հայաստանյան բանկերից միջոցների երկարաժամկետ արտահոսքի դեպքեր: Առկա՞ է արդյոք վտանգ, որ համաշխարհային տնտեսությունում տիրող իրավիճակով պայմանավորված ժամանակավորապես կդադարեն միջազգային ծրագրերը՝ ուղղված ՓՄՉ, հիփոթեքային և այլ վարկավորմանը:

Մինչ օրս ՀՀ առևտրային բանկերից օտարերկրյա բանկերի և ֆինանսական կազմակերպությունների կողմից միջոցների մեծածավալ արտահոսքի դեպքեր չեն արձանագրվել: Նույնը վերաբերում է նաև միջազգային ծրագրերով ներգրավված միջոցներին: Ինչպես նշվեց, ՀՀ բանկերի կողմից օտարերկրյա բանկերից, ոչ բանկ ֆինանսական կազմակերպություններից և միջազգային կազմակերպություններից ներգրավված միջոցների ճնշող մեծամասնությունը երկարաժամկետ է, և արտահոսքի մեծ ռիսկեր չի պարունակում:

Հարցեր. Որո՞չ փորձագետներ խոսում են ՀՀ-ում անշարժ գույքի նկատմամբ պահանջարկի անկման մասին. արդյոք այդ հանգամանքը զուտ ներքի՞ն խնդիր է, թե՞ պայմանավորված է անշարժ գույքի շուկայում միջազգային ճգնաժամով: Այս իմաստով ինչպիսի՞ն է իրավիճակը հիփոթեքային վարկավորման շուկայում: Ինչո՞վ է պայմանավորված տոկոսադրույքների մասնակի բարձրացումը:

Բնչափսի՞ն են Ձեր կանխատեսումները ՀՀ-ում նշված շուկայում զարգացումների առումով:

Քանի որ մեր անշարժ գույքի շուկայում պահանջարկի կարևոր մաս արտասահմանից է, այն չի կարող նույնը մնալ: Միջազգային շուկաներում տիրող ճգնաժամային իրավիճակը «ստիպում» է այն ներդրողներին և գործակալներին, որոնք անշարժ գույքի շուկան դիտարկում էին որպես ներդրման ապահով և շահութաբեր ոլորտ, հնարավորինս զգուշավոր լինել այսօր: Վերոնշյալն էլ հենց պատճառ է հանդիսանում վերջերս անշարժ գույքի շուկայում իրականացված գործարքների ծավալի նվազման: Սակայն, քանի որ մեր անշարժ գույքը չէր ֆինանսավորվում սպեկուլյատիվ վարկավորման միջոցով, դա չստիպեց ներդրողներին գույքի արագ վաճառքի և գների անկման:

Միաժամանակ, ռիսկերի կառավարման ժամանակակից ստանդարտները պահանջում են, որ համաշխարհային շուկայի անբարենպաստ պայմաններում բանկերը վարեն առավել զգուշավոր և կանխահայաց քաղաքականություն: Բնականաբար, ՀՀ առևտրային բանկերը, ականատես լինելով միջազգային ֆինանսական ճգնաժամի բացասական հետևանքներին, սկսել են իրականացնել մի փոքր ավելի զգուշավոր վարկավորման քաղաքականություն, այդ թվում՝ հիփոթեքային վարկավորման բնագավառում: Բանկերի կողմից վարկավորման խստացումն էլ իր հերթին ներառում է ինչպես վարկավորման ավելի խիստ պայմանների սահմանում, այնպես էլ վարկավորման տոկոսադրույքների փոքր-ինչ բարձրացում:

Այնուամենայնիվ, մեր կարծիքով, հիփոթեքային վարկավորման վերջին տարիների կայուն աճը՝ պայմանավորված ՀՀ տնտեսության հետագա աճով, կշարունակվի:

Հարց. Արդյո՞ք մեր վարկային կազմակերպություններին չի սպառնում միջոցների չվերադարձման նույն վտանգը, ինչ տեղի ունեցավ ԱՄՆ-ում:

ԱՄՆ-ում առավելագույն վնասներ կրած բանկերը ներդրումային բանկերն էին, որոնք մեծ կորուստներ էին կրել հիփոթեքային արժեթղթերի իրենց պորտֆելներից, մինչդեռ հայաստանյան բանկերն ու վարկային կազմակերպությունները հիմնականում մասնագիտացված են բանկային ավանդական գործառնությունների մեջ՝ ավանդային և վարկային: Բացի այդ, ՀՀ առևտրային բանկերը հիփոթեքային վարկեր հիմնականում տրամադրում են անշարժ գույքի արժեքի 70%-ից ոչ ավելի ծավալով, որով և իրենց ապահովագրում են անշարժ գույքի գների հնարավոր նվազումից: Քանի որ ինչպես վերևում նշվեց, անշարժ գույքի գների անկում ՀՀ-ում չկա, ՀՀ բանկային համակարգը միջոցների չվերադարձման նմանատիպ խնդիրներ չունի:

Մյուս կողմից, ՀՀ բանկային համակարգի կապիտալիզացիայի մակարդակը շատ ավելի բարձր է: Այսպես, հայաստանյան բանկերի համար կապիտալի համարժեքության նորմատիվային պահանջվող մեծությունը բարձր է՝ 12%, ի հակադրություն ԱՄՆ բանկերի համար սահմանված համապատասխան մեծության 8%-ի: Միաժամանակ, ՀՀ առևտրային բանկերն իրենց կապիտալի համարժեքությունը պահպանում են էլ ավելի բարձր մակարդակի վրա, քան պահանջվում է:

Ելնելով վերոնշյալ բոլոր գործոններից՝ կարող ենք ասել, որ ՀՀ բանկային համակարգը բավականին կայուն է, և ԱՄՆ իրավիճակի կրկնությունը ՀՀ բանկերում հավանական չէ:

Հարց. Վերջերս հաճախ է խոսվում վարկավորման առավելագույն շեմի սահմանափակումը վերացնելու մասին, որը չի կարող գերազանցել ԿԲ կողմից սահմանվող բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկը: Ինչպիսի՞ն է այս հարցում ԿԲ դիրքորոշումը:

ՀՀ առևտրային բանկերը պարբերաբար բարձրացնում են վարկավորման տոկոսադրույքի՝ ՀՀ ԿԲ բանկային տոկոսի հաշվարկային տոկոսադրույքի կրկնապատիկը չգերազանցելու սահմանափակումը վերացնելու հարցը:

Առևտրային բանկերի տոկոսադրույքների սփրեդը, այն է՝ վարկավորման և ավանդների ներգրավման տոկոսադրույքների միջև տարբերությունը, բանկերի կողմից ճշգրտվում է՝ վերջիններիս կողմից ստանձնած ռիսկի մեծությանը համապատասխան: Նշված ռիսկը կարող է պայմանավորված լինել ինչպես առանձին բանկի կողմից իրականացվող քաղաքականությամբ, այնպես էլ՝ տնտեսության ընդհանուր իրավիճակով: Նշվածի մասին է վկայում զարգացած երկրների համեմատ անցումային երկրներում տոկոսադրույքի սփրեդի ավելի բարձր մակարդակը: Այսպիսով, վարկավորման տոկոսադրույքի սահմանափակման պահանջը բանկերին «գրկում» է իրենց կողմից ստանձնած ռիսկին համապատասխան իրենց տոկոսային քաղաքականությունը ճշգրտելու հնարավորությունից, ինչը բնականաբար, ցանկալի չէ ԿԲ տեսանկյունից:

Հարց. Ինչպիսի՞ն են երկրում ապադոլարացման տեմպերը: Որքանո՞վ է բնակչությունն սկսել ավելի շատ վստահել ՀՀ դրամին: Ինչպիսի՞ն է բանկերում բնակչության ավանդների արժույթային կառուցվածքը: Ինչպիսի՞ն է դրանց վարքագիծը:

2004թ-ի կեսերից, միջազգային ֆինանսական շուկայում ԱՄՆ դոլարի արժեզրկմամբ պայմանավորված, Հայաստանում ևս դոլարն սկսեց արժեզրկվել, սակայն ավելի քան մեկ տարի պահանջվեց (շարունակական արժեզրկման պայմաններում տարեկան տեմպը կազմեց 14.2%), որպեսզի հասարակության հավատն ազգային արժույթի նկատմամբ որոշ չափով աճեր: Արդյունքում, արդեն 2005թ-ի կեսերից դիտվեց դրամայնացման ակտիվ գործընթաց, որի բարձր տեմպերը պահպանվեցին մինչև 2008թ.: Դա հիմնականում արտահայտվել է փողի ազրեզատների դրամային տարրերի աննախադեպ բարձր աճի տեմպերով, մասնավորապես. շրջանառությունում կանխիկի միջին տարեկան աճը 2005-2007թթ. ժամանակահատվածում կազմել է շուրջ 50% (2003-2004թթ-ի միջին տարեկան 5.5%-ի դիմաց), դրամային ավանդներինը՝ 71% (15.3%-ի դիմաց): Դրան հակառակ, զգալիորեն դանդաղել են արտարժույթային ավանդների աճի տեմպերը, որոնք դրամային արտահայտությամբ 2003-2004թթ. միջին տարեկան 33.4%-ից 2005-2006թթ-ին իջել է մինչև 1.4%-ի, իսկ 2007-ին անգամ նվազել 9.1%-ով (դոլարային արտահայտությամբ դրանք կազմել են համապատասխանաբար 47.7%, 17.5% և 8.6%):

Նշված ժամանակահատվածում տնտեսության ապադոլարացման բարձր տեմպերը հանգեցրել են դրամայնացման գործակցի (դրամային զանգված/ՀՆԱ հարաբերակցությունը) զգալի աճին՝ ավելի քան 2.3 անգամ կամ 2004թ-ի 7.6%-ի դիմաց 2007-ին հասել է 17.8%-ի:

2008 թվականի սկզբից դիտվել է տնտեսության դրամայնացման գործընթացի որոշակի դանդաղում, որի ազդեցությամբ դրամային ավանդների տարեկան աճը սեպտեմբերի վերջի դրությամբ կազմել է 45%՝ նախորդ տարվա վերջի շուրջ 80%-ի դիմաց, իսկ արտարժույթային ավանդների աճը՝ 10%՝ նախորդ տարվա վերջի 9.1% նվազման դիմաց (դոլարային արտահայտությամբ՝ 22.3% աճ՝ 8.6%-ի դիմաց):

Ներկայումս առևտրային բանկերում ներդրված միջոցների արժույթային կառուցվածքը հոգուտ դրամային ավանդների է՝ 64/36% հարաբերակցությամբ, այն դեպքում, երբ 2005թ-ի վերջին այն ճիշտ հակառակն էր, իսկ 2004-ի վերջին 25/75% հարաբերակցությամբ գերակշռել են արտարժույթային ավանդները:

Հարց. Գրանցվե՞լ են արդյոք բանկերից միջոցների արտահոսքի դեպքեր՝ պայմանանավորված այն մտավախությամբ, որ միջազգային իրացվելիության ճգնաժամը ազդեցություն կունենա ՀՀ բանկային համակարգի վրա:

ՀՀ առևտրային բանկերի կողմից ֆիզիկական և իրավաբանական անձանցից ներգրավված միջոցներն առաջին ինն ամիսների ընթացքում աճել են 21%, որը համահունչ է նախորդ տարվա առաջին ինն ամիսների 20% աճին, ընդ որում, 2008թ.-ի առաջին ինն ամիսների միջին ամսական աճը ևս համահունչ է 2007թ.-ի համապատասխան աճի հետ՝ 2%: Վերոնշյալը վկայում է այն մասին, որ բանկերից միջոցների արտահոսք չի նկատվում:

Հարց. Քննարկվո՞ւմ է արդյոք ֆիզիկական անձանց ավանդների երաշխավորման հիմնադրամի կողմից երաշխավորվող ավանդների առավելագույն գումարի վերանայման հարցը, և եթե այո՝ ինչ ուղղությամբ:

Նման միջոցառումներ իրականացվում են միայն այն երկրներում, որտեղ կան խնդիրներ բանկային համակարգում: Բնականաբար, մեզ մոտ առայժմ նման հարց չի քննարկվում: